Պատերազմական հանցագործությունների ազդեցությունը հակամարտությունների կարգավորման գործընթացի վրա. Լեռնային Ղարաբաղի դեպքը

ՄԱՐԻԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման ժամանակ, երբ մետրոպոլիան չի կարողանում իրավական կամ քաղաքական մեթոդներով կանխել այդ գործընթացի ուղղվածությունը դեպի ինքնորոշվող ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչում և կիրառում, հաճախ դիմում է ռազմական ագրեսիայի, որի ընթացքում կատարում է պատերազմական կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություններ՝ իր նպատակին հասնելու համար: Քանի որ միջազգային իրավունքը դրանք բնորոշում է որպես ծանր հանցագործություններ, ինքնորոշվող կողմը կարող է դրանք օգտագործել որպես հիմնավոր փաստարկ՝ այդ իրավունքի անհապաղ կիրառման պահանջով: Հոդվածում քննարկվում է 2020 թվականին ադրբեջանաթուրքական ագրեսիայի ժամանակ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ կիրառված միջոցների համապատասխանությունը միջազգային իրավունքում պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար սահմանված չափանիշներին, ինչպես նաև դրանց հիման վրա Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշման հարցին առչվող գործընթացում էական զարգացումներ ապահովելու հնարավորությունները: Դիտարկվում է նաև Կոսովոյի և Արևելյան Թիմորի ինքնորոշման հակամարտությունների կարգավորման գործընթացներում նման մոտեցման կիրառման արդյունավետությունը:

Բանալի բառեր

Պատերազմական հանցագործություններ, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, պատերազմի չթույլատրված մեթոդներ և միջոցներ, հակամարտություններ, Լեռնային Ղարաբաղ, ադրբեջանաթուրքական ագրեսիա

Նախաբան

Հետկոնֆլիկտային խաղաղաշինությանն ու անցումային արդարադատությանն առնչվող հետազոտությունները հակամարտություններում ընդգծում են հակամարտող կողմերի ինքնության կարևոր դերը[1], ինչը հաճախ առանցքային նշանակություն է ձեռք բերում հակամարտությունների լուծման համատեքստում: Կոնֆլիկտային միջավայրը սովորաբար հագեցած է լինում հակամարտող կողմերի տարբերություններով, որոնք պատերազմի բռնությունները հաճախ դարձնում են երկարատև ու առավել ինտենսիվ:[2] Ինքնորոշման հակամարտությունների դեպքում, որպես կանոն, բռնությունների են դիմում մետրոպոլիաները՝ հաճախ փորձելով ամենատարբեր միջոցներով ու մեթոդներով, ռազմական ուժով, պատերազմական հնարքներով ու տեխնոլոգիաներով ավելի մեծ կորուստներ պատճառել ինքնորոշվող կողմին, դուրս մղել նրան ինքնորոշման տարածքից և ազդել մարդկանց ինքնության գիտակցության վրա: Ավելին, զինված հակամարտությունների ընթացքում դրական ելք արձանագրելու համար շատ հաճախ մյուս կողմի նկատմամբ կիրառվում են պատերազմական և մարդկության դեմ ուղղված

[1] **Nevin T. Aiken,** Post-Conflict Peacebuilding and the Politics of Identity: Insights for Restoration and Reconciliation in Transitional Justice, *The canadian journal of peace and conflict studies*, **40**, 2, 2008, 9-38. http://www.peaceresearch.ca/pdf/40_2/Aiken.pdf; **Lesley Connolly,** Justice and peacebuilding in postconflict situations: An argument for including gender analysis in a new post-conflict model, *Occasional Paper Series,* 1, 2012, 1-37. https://www.files.ethz.ch/isn/154904/ACCORD-occasionalpaper-2012-1.pdf; **Promise Thembelihle Shabangu,** Post conflict reconstruction and Peacebuilding in Africa's great lakes Region: the role of transitional justice, 2016, University of KwaZulu-Natal, p. 124, pp. V. https://researchspace.ukzn.ac.za/bitstream/handle/10413/14276/Shabangu_Promise_Thembelihle_2016..pdf?sequence=1&isAllowed=y

[2] **Elaine K. Denny, Barbara F. Walter,** Ethnicity and civil war // *Journal of Peace Research,* **51**, 2, 2012, 199–212. DOI:10.1177/0022343313512853; **Lee Seymour, Kristin M. Bakke and Kathleen Gallagher Cunningham,** E pluribus unum, ex uno plures: Competition, violence, and fragmentation in ethnopolitical movements, *Journal of Peace Research,* **53**, 1, 2016, 3–18. DOI:10.1177/0022343315605571; **Lotta Themnér and Peter Wallensteen,** Armed Conflicts, 1946–2011, *Journal of Peace Research*, **49**, 4, 2012, 565–575. DOI: 10.2307/41721607

հանցագործություններ, հետևաբար շարունակվող հակամարտությունների, զանգվածային բռնությունների և օտարերկրյա միջամտությունների պայմաններում առանձնակի կարևորություն ունի հակամարտությունների կարգավորման գործընթացի վրա այդ երևույթների ազդեցության ուսումնասիրումը:

Այդ գործողությունների, դրանց նպատակների ու հետևանքների ուսումնասիրումը հնարավորություն կտա կանխել կամ դադարեցնել աղետալի զարգացումները, խնայել պետության թե՛ մարդկային և թե՛ ֆինանսական սահմանափակ ռեսուրսները, միջազգային իրավունքի շրջանակներում հասնել հանցագործությունների կատարման մեջ մեղավորների նկատմամբ պատժամիջոցներ սահմանող փաստաթղթերի ընդունմանը և ինքնորոշման իրավունքի անհապաղ կիրառմանը, քանի որ դրա հետաձգումը հնարավորություն կտա մետրոպոլիային՝ նպատակին հասցնելու հանցագործությունները: Դրանք հաճախ դրսևորվում են որպես տեղահանություն, բնաջնջում, ռազմական նպատակակետեր չհանդիսացող օբյեկտների ռմբակոծություն, պատերազմի արգելված մեթոդների ու միջոցների կիրառում, պատերազմի ժամանակ ռազմական գործողություններին չմասնակցող կամ զենքը վայր դրած կամ այլևս պաշտպանության միջոց չունեցող անձանց սպանություն, գերեվարված անձանց խոշտանգում, որոնք կատարվել են պետության կողմից օտարերկրյա քաղաքացիների և նույնիսկ իր քաղաքացիների նկատմամբ: Այդ գործողությունները պետք է արժանանան միջազգային հանրության մտահոգությանն ու արձագանքին, մինչդեռ հաճախ շարունակում են խնդրահարույց մնալ՝ հատկապես էթնիկ բնույթի բռնության դրսևորումներ ունեցող հակամարտությունների դեպքում:[3]

Ըստ տարբեր աղբյուրների՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ադրբեջանաթուրքական ագրեսիայի ընթացքում թույլ են տրվել պատերազմական և

[3] **Jacques Schuhmacher and Jonathan Waterlow,** War Crimes Trials and Investigations: Major Trends and Disciplinary Challenges, St Antony's Series, 2018, pp. 1-22. https://doi.org/10.1007/978-3-319-64072-3_1

մարդկության դեմ ուղղված բազմաթիվ հանցագործություններ ու վայրագություններ: [4] Քանի որ հանցագործությունների համար պատժի բացակայությունը հղի է նոր հանցագործություններ ծնելու վտանգով, ապա կարևոր է ստուգել այդ փաստարկումների իրավական լիարժեքությունը, դրա հաստատման դեպքում՝ բացահայտել դրանց համար պատժի սահմանման գործնական հնարավորությունները:

Այդ նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- պարզել միջազգային իրավունքի նորմերում արձանագրված պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների հատկանիշների և 2020 թվականին Լեռնային Ղարաբաղի դեմ ադրբեջանաթուրքական ագրեսիայի ընթացքում իրականացված գործողությունների համապատասխանությունը,
- բացահայտել ինքնորոշման իրավունքի իրացման գործընթացներում պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների առկայության արձանագրման ազդեցությունը

[4] **Robin Fabbro,** Evidence mounts of war crimes in Nagorno-Karabakh, 16 October 2020, *OC-media* https://oc-media.org/evidence-mounts-of-war-crimes-in-nagorno-karabakh/; Last to Flee: Older People's Experience of War Crimes and Displacement in the Nagorno-Karabakh Conflict, Amnesty International, 17 May 2022, *reliefweb, OCHA Services*, https://reliefweb.int/report/armenia/last-flee-older-peoples-experience-war-crimes-and-displacement-nagorno-karabakh-conflict-enhyru; Azerbaijan hits maternity hospital in conflict with Armenia over Nagorno-Karabakh, 29 October 2020, *USA Today* https://www.usatoday.com/story/news/world/2020/10/29/azerbaijan-hits-hospital-dispute-armenia-over-nagorno-karabakh/6073536002/; Azerbaijan: Attack on Church Possible War Crime. Investigate and Hold Those Responsible to Account, 16 December 2020, https://www.hrw.org/news/2020/12/16/azerbaijan-attack-church-possible-war-crime; Shelling Stepanakert with cluster bomb missiles 04.10.2020 https://www.youtube.com/watch?v=cZ2vsJnv86E; Видео с регистратора: обстрел Степанакерта 04.10.2020 https://www.youtube.com/watch?v=3jG90lI23Rc; In pictures: Azerbaijan's controversial war park, 26 April 2021, *BBC News* https://www.bbc.com/news/world-europe-56885719; **Lewis Read,** Azerbaijan's War Trophies Park – Ethnic Intolerance in the Nagorno-Karabakh Conflict, 18 May 2021, *International Affairs Network* https://internationalaffairsnetwork.org/2021/05/18/azerbaijans-war-trophies-park-ethnic-intolerance-in-the-nagorno-karabakh-conflict/

Կոսովոյի և Արևելյան Թիմորի հակամարտությունների կարգավորման գործընթացի վրա,

- վերլուծել, թե Լեռնային Ղարաբաղում 2020 թվականի ադրբեջանաթուրքական ագրեսիայի ընթացքում իրականացված պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների մասին վկայող փաստական նյութի հիման վրա ինչ արդյունքներ կարելի է ակնկալել կարգավորման գործընթացը վերսկսելու և արդյունքի հասցնելու տեսակետից:

Ուստի, հոդվածի հաջորդ երեք մասերում կդիտարկվեն նշված խնդիրների լուծումները, ապա կներկայացվեն եզրակացությունները:

Միջազգային իրավունքում սահմանված պատերազմական հանցագործությունների հատկանիշների համապատասխանությունը 2020 թվականի ադրբեջանաթուրքական ագրեսիայի ժամանակ իրականացված գործողություններին

Զինված հակամարտությունների, պատերազմական գործողությունների ընթացքում մի շարք վարքագծային նորմերի խախտումներ միջազգային իրավունքում սահմանված են որպես պատերազմական և մարդկության դեմ կատարված հանցագործություններ: Այդպիսի դրույթներ ներառված են ինչպես միջազգային մարդասիրական, այնպես էլ միջազգային քրեական իրավունքում: Միջազգային մարդասիրական իրավունքում պատերազմական հանցագործությունների վերաբերյալ դրույթներ պարունակող հիմնական փաստաթղթերն են՝ Պատերազմի օրենքների ու սովորույթների մասին Հաագայի խաղաղության 1-ին (1899) և 2-րդ (1907) կոնֆերանսներում ընդունված միջազգային կոնվենցիաները, որոնք շեշտը դնում են պատերազմ վարելու որոշակի միջոցների և մեթոդների կիրառման արգելքի վրա, Ժնևի 1864 թվականի կոնվենցիան և դրան հաջորդած 1949 թվականի Ժնևի չորս կոնվենցիաները և 1977 թվականի երկու Լրացուցիչ արձանագրությունները, որոնք ամրագրում են այն անձանց պաշտպանությունը,

ովքեր այլևս չեն մասնակցում ռազմական գործողություններին, Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին կոնվենցիան, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի՝ պատերազմական հանցագործներին հանձնելու և պատժելու մասին 1946 թվականի փետրվարի 13-ի 3(I) և 1947թ. հոկտեմբերի 31-ի 170 (II) բանաձևերը, Նյուրնբերգի Միջազգային ռազմական դատարանի կանոնադրությամբ ճանաչված 1946 թվականի դեկտեմբերի 11-ի 95 (I) բանաձևը և 1966 թվականի դեկտեմբերի 12-ի 2184 (XXI) և 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2202 (XXI) բանաձևերը, ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի՝ պատերազմական հանցագործներին և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ կատարած անձանց պատժի մասին 1965 թվականի հուլիսի 28-ի 1074 D (XXXIX) և 1966 թվականի օգոստոսի 5-ի 1158 (XLI) բանաձևերը, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1968 թվականի նոյեմբերի 26-ի 2391 (XXIII) բանաձևով ընդունված «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» կոնվենցիան, Միջազգային իրավունքի հանձնաժողովի 1996 թվականի «Մարդկության խաղաղության և անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների մասին» օրենսգիրքը և այլն:

Այդ փաստաթղթերում սահմանված պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ դրույթներից շատերը համարվում են սովորութային իրավունքի մաս և, որպես այդպիսին, պարտադիր են բոլոր պետությունների համար՝ անկախ նրանից՝ այդ պետությունները վավերացրել են համապատասխան փաստաթղթերը, թե՝ ոչ, և անկախ այն հանգամանքից՝ դա համապատասխանում է երկրի

ներքին օրենսդրությանը, որտեղ կատարվել է հանցագործությունը:[5]

Պատերազմական հանցագործությունների դատապարտումը կարևոր է ոչ միայն արդեն կատարված հանցագործությունների համար պատժի սահմանման անհարժեշտությամբ, այլև այն պատճառով, որ վայրագություններ գործելու գայթակղությունն էապես մեծանում է հատկապես այն դեպքում, երբ դրանք նպաստում են հաղթանակի ձեռքբերմանը և մնում են անպատիժ:[6]

Վերլուծությունները ցույց են տալիս, որ արդի զինված հակամարտություններում պատերազմի նոր մեթոդների և մարտավարության կիրառումը կարող է մեծ զոհեր, վնասներ ու տառապանքներ պատճառել ինչպես պատերազմական գործողությունների մասնակիցներին, այնպես էլ պատերազմական գործողություններին չմասնակցող քաղաքացիական անձանց: [7] Այդ արարքներն ուղղված են յուրաքանչյուր մարդու, էթնիկ խմբերի և, ընդհանուր առմամբ, համամարդկային գոյատևման համար անհրաժեշտ պայմանների և իրավունքների դեմ, ինչպիսիք են՝ կյանքը, ֆիզիկական ամբողջականությունը, պատիվը, համբավը, անձնական արժանապատվությունը և հիմնարար այլ իրավունքներ ու ազատություններ:[8]

Պատերազմական հանցագործությունները, ի տարբերություն ցեղասպանության և մարդկության դեմ ուղղված հանցագործու-

---

[5] **Daniel Thürer,** International Humanitarian Law: Theory, Practice, Context. Hague academy of International Law, 2011, pp. 78, **Olivier De Schutter,** International Human Rights Law Cases, Materials, Commentary. Cambridge University Press, New York, 2010, pp. 74, 86.

[6] **Arnold Krammer,** War Crimes, Genocide, and the Law: A Guide to the Issues, Contemporary Military, Strategic, and Security Issues, PRAEGER, 2010, pp. 4-5.

[7] **David M. Crowe** War Crimes and Genocide in History, and the Evolution of Responsive International Law // *Nationalities Papers: The Journal of Nationalism and Ethnicity*, **37**, 6, 2009, 757-806. DOI:10.1080/00905990903230777

[8] **Jovasevic D., Ilievski A., Aleksic S., Ugrinovska E.** The crime against humanity in international law and Serbian criminal law, *Международный научно-исследовательский журнал,* 2015, 2-2, **33**, 67-72. DOI:10.0000/cyberleninka.ru/article/n/the-crime-against-humanity-in-international-law-and-serbian-criminal-law

թյունների, տեղի են ունենում պատերազմի, զինված հակամարտության կամ օկուպացիայի ընթացքում, ինչպես մարտական գործողությունների մասնակիցների, այնպես էլ մարտական գործողությունների հետ առնչություն չունեցող քաղաքացիական անձանց նկատմամբ՝ կախված հանցագործության տեսակից:[9]

Ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կոնվենցիաների, Ժնևի 1977 թվականի հունիսի 8-ի 1-ին և 2-րդ Լրացուցիչ արձանագրությունների, Հաագայի 1899 թվականի հուլիսի 29-ի և 1907 թվականի հոկտեմբերի 18-ի կոնվենցիաների հիման վրա միջազգային իրավունքում պատերազմական հանցագործություններ են համարվում, մասնավորապես, հետևյալ արարքները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում Լեռնային Ղարաբաղի նկատմամբ 2020թ. իրականացված ադրբեջանաթուրքական ագրեսիայի ընթացքում իրականացված գործողությունների համատեքստում՝

- ռազմագերուն կամ այլ պաշտպանված անձին արդար և կանոնավոր դատավարության իրավունքներից դիտավորյալ զրկելը,
- ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող քաղաքացիական բնակչության կամ առանձին քաղաքացիական անձանց դեմ դիտավորյալ հարձակում իրականացնելը,
- ՄԱԿ կանոնադրության համապատասխան մարդասիրական օգնության կամ խաղաղապահ առաքելության մեջ ներգրավված անձնակազմի, կայանքների, նյութերի, ստորաբաժանումների կամ տրանսպորտային միջոցների դեմ ուղղված հարձակումները՝ քանի դեռ նրանք միջազգային իրավունքի համաձայն քաղաքացիական անձանց կամ քաղաքացիական օբյեկտների պաշտպանության իրավունք ունեն,
- անպաշտպան և ռազմական նպատակակետեր չհանդիսացող քաղաքների, գյուղերի, տների կամ շինությունների վրա ցանկացած

[9] **Jovasevic D.,**... նշվ. աշխ.

միջոցներով դիտավորյալ հարձակումներ իրականացնելը կամ ռմբակոծելը,

- թշնամական ազգին կամ բանակին պատկանող անձանց սպանելը կամ վիրավորելը, որոնք, վայր դնելով զենքերը կամ այլևս չունենալով պաշտպանության միջոցներ՝ հանձնվել են, անդամահատումները, դաժան վերաբերմունքն ու խոշտանգումները,

- կրոնին, կրթությանը, արվեստին, գիտությանը կամ բարեգործական նպատակների ծառայող շենքերի, պատմական հուշարձանների, հիվանդանոցների վրա դիտավորյալ հարձակումները՝ պայմանով, որ դրանք ռազմական նպատակներ չեն,

- հակառակորդի իշխանության տակ գտնվող անձանց ֆիզիկական խեղման կամ որևէ տեսակի բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը, որոնք չեն արդարացվում տվյալ անձի բժշկական, ատամնաբուժական կամ հիվանդանոցային բուժմամբ և չեն իրականացվում նրա շահերից ելնելով,

- հակառակորդի ունեցվածքը ոչնչացնելը կամ գրավելը, եթե այդպիսի ոչնչացումը կամ բռնագրավումը չի պահանջվում պատերազմի անհրաժեշտությունից ելնելով,

- թույն կամ թունավորված զենք կամ այլ արգելված զինատեսակներ օգտագործելը,

- շնչահեղձ, թունավոր կամ այլ գազերի և բոլոր նմանատիպ հեղուկների, նյութերի կամ սարքերի օգտագործումը,

- օտարերկրյա վարձկանների օգտագործումը՝ պատերազմական գործողությունների ընթացքում,

- հակամարտության պատճառով քաղաքացիական բնակչության տեղահանման հրաման տալը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պայմանավորված է քաղաքացիական անձանց անվտանգության ապահովմամբ կամ ռազմական այլ պատճառներով և մի շարք այլ հանցագործություններ:[10]

Հանցագործությունների այդ տեսակներին համապատասխանում են 2020 թվականին Լեռնային Ղարաբաղի դեմ ադրբեջա-

[10] https://ihl-databases.icrc.org/en/ihl-treaties/treaties-and-states-parties

նաթուրքական ագրեսիայի ընթացքում և դրանից հետո կատարված հետևյալ գործողությունները՝

1. Ադրբեջանի բանտերում ապօրինաբար շարունակում են պահվել հայ զինվորներ և քաղաքացիական անձինք, որոնք ենթարկվում են նվաստացուցիչ և անմարդկային պատիժների, [11] բռնության,[12] խոշտանգումների[13] և զրկված են առնվազն արդար և անկողմնակալ դատարանի կողմից դատապարտվելու և պատիժ կրելու՝ միջազգային իրավունքի նորմերով ամրագրված իրավունքից:[14] Ավելին, որոշ հանգամանքներում նույնիսկ հայ ռազմագերիները դառնում են «առևտրի առարկա», որոնց ադրբեջանական կողմը փոխանակում է ականապատ տարածքների քարտեզների հետ:[15]

2. Ադրբեջանի կողմից գերճշգրիտ զենքերով դիտավորյալ թիրախավորվել են Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչությունը,[16]

---

[11] Azerbaijan: Armenian Prisoners of War Badly Mistreated: Investigate, Prosecute Violations; Ensure Protection of All Military Detainees, 2 December 2020, *HUMAN RIGHTS WATCH* https://www.hrw.org/news/2020/12/02/azerbaijan-armenian-prisoners-war-badly-mistreated

[12] Azerbaijan: Armenian POWs Abused in Custody: Investigate Abuse, Protect All Detainees, 19 March 2021, *HUMAN RIGHTS WATCH* https://www.hrw.org/news/2021/03/19/azerbaijan-armenian-pows-abused-custody

[13] Group of Armenian POWs blindfolded and tortured with skewers by Azerbaijani armed forces, 30 October 2020, *AzeriWarCrimes.org* https://azeriwarcrimes.org/2020/10/30/pows-blindfolded-and-tortured-with-skewers-by-azerbaijani-armed-forces/

[14] **Ulkar Natiqqizi, Ani Mejlumyan,** Armenian soldiers on trial in Azerbaijan, 1 Jul 2021, *EURASIANET* https://eurasianet.org/armenian-soldiers-on-trial-in-azerbaijan

[15] **Ani Mejlumyan,** A year after war, Armenian prisoners still bargaining chips in Azerbaijan, 10 December 2021, *EURASIANET* https://eurasianet.org/a-year-after-war-armenian-prisoners-still-bargaining-chips-in-azerbaijan

[16] Azerbaijani Forces Bombing Civilians in Stepanakert, 05.10.2020 https://www.youtube.com/watch?v=VlbjJqAliZE; 30 Days of War in Karabakh, 27.10.2020 https://www.youtube.com/watch?v=Mim3fa7NUok

ռմբակոծվել է մայրաքաղաք Ստեփանակերտը,[17] ռազմական նպատակակետեր չհանդիսացող մի շարք գյուղեր ու քաղաքներ[18], տներ, քաղաքացիական շինություններ,[19] ենթակառուցվածքներ,[20] գնդակոծվել են նույնիսկ քաղաքացիական տրանսպորտային միջոցներ, որոնք ռազմական գործողությունների մասնակիցներ չեն եղել:[21]

3. Ռմբակոծվել են նաև մարդասիրական օգնություն տրամադրող, վիրավոր զինվորներ տեղափոխող շտապօգնության

---

[17]Степанакерт обстреливают из запрещенного оружия, *ARTSAKH TV NEWS*, 04.10.2020 https://www.youtube.com/watch?v=KV7-J1zoSMA&t=2s; Степанакерт: разрушенный город, *Euronews по-русски*, 15.10.2020 https://www.youtube.com/watch?v=2bIRLnLX-z8; Nagorno-Karabakh conflict: Stepanakert under fire as Armenia-Azerbaijan fighting intenhadrutsifies, *FRANCE 24 English*, 05.10.2020 https://www.youtube.com/watch?v=m7yX8ITQ6YY; Nagorno-Karabakh conflict: Stepanakert shelled as fighting between Armenia, Azerbaijan escalates, *Global News*, 05.10.2020 https://www.youtube.com/watch?v=osGe8Oj1OfY

[18] Nagorno-Karabakh conflict: Major cities hit as heavy fighting continues, 6 October 2020, *BBC News,* https://www.youtube.com/watch?v=Lkqadv1Iez8; Major cities hit as heavy fighting continues, *AFP News Agency,* 04.10.2020 https://www.youtube.com/watch?v=10sPdjSLFrk; Azerbaijan claims second city has been attacked, Sky News, 05.10.2020 https://www.youtube.com/watch?v=M3vJO3DdKEgv

[19] Nagorno-Karabakh conflict: Residents of Stepanakert shelled, houses razed to the ground, 30 October 2020, *Global News,* https://www.youtube.com/watch?v=QgoBQO5upd0

[20] Azerbaijan: Unlawful Strikes in Nagorno-Karabakh: Investigate Alleged Indiscriminate Attacks, Use of Explosive Weapons, 11 December 2020, *HUMAN RIGHTS WATCH* https://www.hrw.org/news/2020/12/11/azerbaijan-unlawful-strikes-nagorno-karabakh; LIVE: AZERBAIJAN LAUNCHED AN ATTACK ON ARTSAKH (NAGORNO-KARABAKH REPUBLIC), *Regional Post*, https://regionalpost.org/en/articles/live-azerbaijan-launched-an-attack-on-artsakh-nagorno-karabakh-republic.html

[21] Azerbaijan targets civilian population in Stepanakert. Exclusive video, *First Channel News*, 04 October 2020, https://www.1lurer.am/en/2020/10/04/Azerbaijan-targets-civilian-population-in-Stepanakert-Exclusive-video/327022; Azerbaijan attacks civilian bus in Vardenis, Regional Post, https://regional Yahoo!News, https://ph.news.yahoo.com/maternity-ward-hit-shelling-stepanakert-200108494.html; Hospital in Stepanakert heavily damaged by Azerbaijani bombing, EVN Report, 28 October 2020, https://www.youtube.com/watch?v=W1o8V65JyrY

մեքենաները, որոնց վրա տեսանելի տեղում փակցված է եղել բժշկական օգնության տարբերանշանը:[22]

4. Պատերազմի ընթացքում ադրբեջանական ռմբակոծության թիրախում են հայտնվել նաև Ստեփանակերտի ծննդատունը,[23] հիվանդանոցներ,[24] կրթական, արվեստին ծառայող քաղաքացիական օբյեկտներ, ոչնչացվել կամ վանդալիզմի են ենթարկվել մշակութային արժեքներ,[25] կրոնական կոթողներ, վանական համալիրներ, եկեղեցիներ ու մատուռներ,[26] խաչքարեր, հուշարձաններ, պղծվել են գերեզմաններ[27] և այլն:

---

[22] **Hugh Williamson,** Unlawful Attacks on Medical Facilities and Personnel in Nagorno-Karabakh: New Research on Three Incidents from 2020 Conflict, 26 February 2021, *HUMAN RIGHTS WATCH* https://www.hrw.org/news/2021/02/26/unlawful-attacks-medical-facilities-and-personnel-nagorno-karabakh; Azerbaijanis target ambulance vehicle transporting injured after ceasefire was declared, 11 October 2020, *ARMENPRESS,* https://armenpress.am/eng/news/1031300/

[23] Nagorno-Karabakh hospital hit by shelling, *Associated Press*, 29.10.2022 https://www.youtube.com/watch?v=o8XivRzn1L8; Maternity Ward Hit in Shelling on Stepanakert, 29 October 2020, Yahoo!News, https://ph.news.yahoo.com/maternity-ward-hit-shelling-stepanakert-200108494.html; Hospital in Stepanakert heavily damaged by Azerbaijani bombing, EVN Report, 28 October 2020, https://www.youtube.com/watch?v=W1o8V65JyrY

[24] **Hugh Williamson, ...** նշվ. աշխ.

[25] The lost monuments of Artsakh: Ongoing vandalism, 9 October 2021, *Fact Investigation Platform*, https://fip.am/en/17184

[26] Azerbaijan says it plans to erase Armenian heritage in Karabakh, 07 February 2022 https://www.youtube.com/watch?v=uFV3snqoIE0; Cathedral In Nagorno-Karabakh Shelled As Azerbaijani Districts Also Attacked, *Radio Free Europe/ Radio Liberty*, 09.10.2020 https://www.youtube.com/watch?v=mlqlTQWD3R4; Nagorno-Karabakh: Civilians and churches under fire - BBC News, 13.10.2020 https://www.youtube.com/watch?v=LPEzLNyz1LM; **Lilit Shahverdyan,** Azerbaijan to Eliminate Armenian Cultural Heritage in Nagorno-Karabakh 3 MARCH 2022, The armenian mirror-spectator, https://mirrorspectator.com/2022/03/03/azerbaijan-to-eliminate-armenian-cultural-heritage-in-nagorno-karabakh/

[27] **Siranush Ghazanchyan,** Azerbaijanis destroy Armenian cross-stone in occupied Artsakh village, 12 January 2021, https://en.armradio.am/2021/01/12/azerbaijanis-destroy-armenian-cross-stone-in-occupied-artsakh-village/; Azerbaijanis Destroy another Armenian Cemetery in Karabakh, *The Armenian Mirror-Spectator*, 4 August 2022, https://mirrorspectator.com/2022/08/04/azerbaijanis-destroy-another-armenian-cemetery-in-karabakh/; Armenian monuments targeted by Azerbaijani

5. Մի շարք տեսանյութեր, որոնք համացանցում տեղադրել են ադրբեջանցիները, վկայում են Լեռնային Ղարաբաղի քառասուն-չորսօրյա պատերազմի ընթացքում ադրբեջանական զինվորների կողմից այլևս պաշտպանության միջոցներ չունեցող կամ գերի հանձնված հայ զինվորներին և քաղաքացիական անձանց անմարդկային տառապանքների և դաժան վերաբերմունքի արժանացնելու, խոշտանգելու, անդամահատելու, սպանելու, նույնիսկ զինվորների և քաղաքացիական անձանց անշունչ մարմինները խեղելու հանգամանքները:[28]

6. Ադրբեջանի կողմից կիրառվել է նաև պատերազմի արգելված միջոցներ, ինչպիսիք են, օրինակ, սուր թունավորում, այրվածքներ առաջացնող և մարդու առողջության երկարատև քայքայում պատճառող ֆոսֆորային և կասետային զենքեր:[29]

---

soldiers, 25 January 2021, *Fact Investigation Platform*, https://fip.am/en/14568; Deliberate destruction and desecration of Armenian cemeteries and gravesites by Azerbaijan's armed forces, 11 January 2021, *AzeriWarCrimes.org*, https://azeriwarcrimes.org/2021/01/11/deliberate-destruction-and-desecration-of-armenian-cemeteries-and-gravesites-by-azerbaijans-armed-forces/; Armenian cemeteries in all settlements of Hadrut are being demolished and destroyed and the gravestones are used as a building material for roads. Human Rights Defender of Artsakh, 11 October 2021, https://infocom.am/en/Article/66259

[28] Azerbaijan's army executes prisoners in Hadrut, Artsakh (Karabakh), 30 October 2020, *AzeriWarCrimes.org* https://azeriwarcrimes.org/2020/10/30/azerbaijans-army-executes-prisoners-in-hadrut-artsakh-karabakh/
Patrick Lancaster, Азербайджанцы снова издеваются над мирными жителями, 18 December 2020 https://www.youtube.com/watch?v=q6ZagLsVgPw; Azeri Soldiers Humiliate & Behead an Armenian War Prisoner, 03 February 2021, https://www.youtube.com/watch?v=9-YuybFkFe4; Armenian captives. Karabakh part1, *Dead armenian Soldiers*, 26 April 2021, https://www.youtube.com/watch?v=pso9w-X_mxc, Armenian captives. Karabakh part2, *Dead armenian Soldiers*, 8 May 2021, https://www.youtube.com/watch?v=Lx1KmDLZkWw; Azeri Soldiers Cut Ears Off Armenian Bodies and speak of Allah, 24 February 2021, https://www.youtube.com/watch?v=k1yMi_ZhyhU

[29] Azerbaijan Continues to Use White Phosphorus in Karabakh, 02.10.2020 https://www.youtube.com/watch?v=SCpv0iZVdog; Shelling Stepanakert with cluster bomb missiles, 04.10.2020 https://www.youtube.com/watch?v=cZ2vsJnv86E; A dash cam video shows Stepanakert, Artsakh (Nagorno Karabakh) hit by Azerbaijani cluster bombs, 04.10.2020 https://www.youtube.com/watch?v=Bv7NUyyHcl4; The humanitarian

7. Թուրքիան ունեցել է անմիջական մասնակցություն՝ ինչպես ռազմական տեխնիկայի, զինամթերքի, անօդաչու թռչող սարքերի, այնպես էլ բանակի համար աշխատող հատուկ մասնագետների ու զինվորականների միջոցով: Ավելին՝ պատերազմի ընթացքում շփման գծի ողջ երկայնքով մարտական գործողություններին մասնակցել են նաև վարձու զինյալներ Սիրիայից և Լիբիայից, որոնք Ադրբեջան են տեղափոխվել Թուրքիայի միջոցով և իրենց խոստացված նյութական կամ ոչ նյութական շարժառիթներով պայմանավորված՝ կատարել են մարտական առաջադրանքներ և պատերազմական հանցագործություններ:[30]

8. Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ իրականացրել է նաև էթնիկ զտումներ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հայ բնակիչներին վախեցնելու, խոշտանգելու, նվաստացնելու, տեղահանելու, նրանց սեփականությունը դիտավորյալ ոչնչացնելու, հալածելու, նրանց վրա պետական իշխանություն հաստատելու և վիճելի տարածքից դուրս մղելու նպատակով: Ընդ որում, Լեռնային Ղարաբաղի նկատմամբ էթնիկ հակամարտության արմատները ձևավորվել են 2020 թվականի ադրբեջանա-թուրքական ագրեսիայից շատ առաջ, Սումգայիթում, Բաքվում ու

---

toll of Azerbaijani scorched-earth strategy in Artsakh/Nagorno-Karabakh: White Phosphorus, devastated nature and non-healing wounds, 23 December 2020 *AzeriWarCrimes.org* https://azeriwarcrimes.org/2020/12/23/the-humanitarian-toll-of-azerbaijani-scorched-earth-strategy-in-artsakh-nagorno-karabakh-white-phosphorus-devastated-nature-and-non-healing-wounds/; White Phosphorus Used by Azerbaijan in Karabakh War (2020), 28 January 2021, https://www.youtube.com/watch?v=eRLdF9oo0yI

[30] **Ed Butler,** The Syrian mercenaries used as 'cannon fodder' in Nagorno-Karabakh, *BBC News*, 10 December 2020 https://www.bbc.com/news/stories-55238803; Videos shared on social media show Syrians sent to fight in Nagorno-Karabakh, *SOHR booklet comprising 22 reports,* 27.10.2020 https://www.syriahr.com/en/190031/; Syrian mercenaries on Azerbaijan's military base in Horadiz, prior to attack on Artsakh (Karabakh), *Azeri War Crimes*, 23.11.2020 https://www.youtube.com/watch?v=qbbbLoURrM8; Разместили ли Азербайджан и Турция сирийских наемников в Карабахе? *Mahanology*, 08.02.2021 https://www.youtube.com/watch?v=VX5XMet3zE8

Ադրբեջանի այլ բնակավայրերում[31], որտեղ բնակվող հայերի նկատմամբ Ադրբեջանի ղեկավարությունը 1988 թվականից կազմակերպել է ջարդեր ու էթնիկ զտումներ՝ հայերին իրենց բնակության վայրերից բռնի հեռացնելու և նրանց ներկայության ապացույցները վերացնելու նպատակով:

Այսպիսով, պատերազմական հանցագործությունների բովանդակության, տեսակների և հատկանիշների ուսումնասիրությունը վկայում է, որ 2020 թվականի ադրբեջանաթուրքական ագրեսիայի ընթացքում արձանագրված գործողությունները, այդ թվում՝ արգելված զինատեսակների օգտագործումը, պատերազմի ընթացքում օտարերկրյա զինյալների օգտագործումը, բժշկական, կրոնական օբյեկտներին, պատմական հուշարձաններին և այլն, անառարկելիորեն համապատասխանում են միջազգային իրավունքով ամրագրված պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների բնույթին ու բովանդակությանը:

Պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների առկայության արձանագրման ազդեցությունը հակամարտությունների կարգավորման գործընթացի վրա

Ինքնորոշման իրավունքի իրացման գործընթացի վրա մետրոպոլիայի պատերազմական հանցագործությունների ազդեցության բացահայտման նպատակով հոդվածի այս մասում կուսումնասիրվեն Կոսովոյի և Արևելյան Թիմորի հակամարտություններում նման գործընթացների հետևանքները: Ընդ որում, այդ հակամարտությունների կարգավորման և ժողովրդավարացման գործընթացները իրականացվել են արտաքին դերակատարների ռազմական և (կամ) քաղաքացիական միջամտության արդյուն-

[31] **Թորոսյան Տ.,** 2020թ. պատերազմ. նախադրյալները, հետևանքները և աղետի հաղթահարման հնարավորությունները, https://luys.am/img/artpic/small/17421d60c00deb99e93e2020Թ.-ՊԱՏԵՐԱԶՄ.-ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ-ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ-ԵՎ-ԱՂԵՏԻ-ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ-ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.pdf.

քում[32]՝ շարունակական կոտորածներն ու քաղաքացիական պատերազմները դադարեցնելու նպատակով, ռազմական ուժի կիրառման միջոցով:[33] Վերլուծության նպատակով կօգտագործվեն այդ հակամարտությունների վերաբերյալ միջազգային կազմակերպությունների ընդունած փաստաթղթերը, ինչպես նաև այդ հակամարտությունների վերաբերյալ կատարված հետազոտությունների արդյունքները[34]:

Նախ հետազոտության առարկա կդառնա նշված հակամարտությունների կարգավորման իրավական բաղադրիչը, մասնավորապես՝ կվերլուծվեն հակամարտությունների կարգավորման նպատակով միջազգային կազմակերպությունների ընդունած փաստաթղթերը, ինչպես նաև երկու դեպքում էլ հաստատված արտաքին կառավարման ընթացքում տեղի ունեցած հանգուցային իրադարձություններն ու փաստերը:

Ի սկզբանե հարկ է նկատել, որ ինչպես շատ այլ հարցերում, այս դեպքում ևս մասնագիտական գրականության մեջ չկա բացարձակ մոտեցում Կոսովոյում և Արևելյան Թիմորում տեղի ունեցած գործողությունների՝ որպես պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ որակելու հստակ հարցում: Օրինակ, չնայած, որ լայն տարածում ունի այն կարծիքը, որ Արևելյան Թիմորում տեղի է ունեցել ցեղասպանություն, սակայն Բ. Սոուլը համարում է, որ թեև անժխտելի են այդ հակամարտության ընթացքում Ինդոնեզիայի կառավարության կատարած բռնություն-

[32] **OisínTansey,** Regime building: Democratization and international administration, Oxford University Press, 2009, pp. 40-41

[33] **Sonja Grimm, Wolfgang Merkel,** War and democratization: Legality, Legitimacy and Effectiveness, *Democratization*, 2008, **15,** 3, 457-471.

[34] **Matthias Ruffert,** The administration of Kosovo and East-Timor by the International Community, *International and Comparative Law Quarterly*, **50**, 3, 2001/08, 613-631. DOI:10.1093/iclq/50.3.613; **Valon Krasniqi,** The role of the International Administration in the Process of the State-Building in Kosovo, *Academic Journal of Interdisciplinary Studies,* **4**, 3, 2015, 409-416. DOI:10.5901/ajis.2015.v4n3s1p409; **Derek McDougall,** The security-development nexus: comparing external interventions and development strategies in East Timor and Solomon Islands, *Asian Security*, **6**, 2, 2010/05, 170-190. DOI:10.1080/14799851003756659

ները, մեծ թվով մարդկանց տառապանքները, սակայն կարելի է վիճարկել դրանց համապատասխանությունը ցեղասպանության չափանիշներին[35], քանի որ, մասնավորապես, այդ չափանիշներն ունեն լրամշակման ու հստակեցումների կարիք: Այդուհանդերձ, մի խումբ հեղինակներ էլ գտնում են, որ Կոսովոյում և Արևելյան Թիմորում տեղի ունեցածը ոչ այլ ինչ է, քան պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ:[36]

Կոսովոյի հակամարտության կարգավորման վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևերից առաջինը 1998 թվականի մարտի 31-ի 1160 բանաձևն էր, որն ընդգծում էր, որ Կոսովոյում ***բռնությունն ու ահաբեկչությունը*** հաղթահարելու ճանապարհը Բելգրադի իշխանությունների կողմից Կոսովոյի ալբանական համայնքին իրական քաղաքական գործընթաց առաջարկելն է և կոչ էր անում Բելգրադի իշխանություններին և Կոսովոյի ալբանական համայնքի ղեկավարությանն անհապաղ, առանց նախապայմանների բովանդակալից երկխոսության մեջ մտնել քաղաքական կարգավիճակի հարցերի շուրջ:[37]

---

[35] **Ben Saul** Was the conflict in East Timor "Genocide" and Why does it Matter? *Melbourne Journal of International Law,* 2, 2, 2001, 1-46, https://law.unimelb.edu.au/__data/assets/pdf_file/0003/1680222/Saul.pdf

[36] **Kiernan, B.** The Demography of Genocide in Southeast Asia: The Death Tolls in Cambodia, 1975–79, and East Timor, 1975–80' *Critical Asian Studies*, 2003, **35**, 4**;** **Lise Morje Howard** State-building through neotrusteeship: Kosovo and East Timor in comparative perspective, United Nations University, WIDER Working Paper No. 2013/126 https://www.wider.unu.edu/sites/default/files/WP2013-126.pdf; Confronting Crimes Against Humanity: A study guide on peace and conflict, *UNITED STATES INSTITUTE OF PEACE,* Education and Training: Domestic Programs 1200, https://www.usip.org/sites/default/files/Adan/09sg.pdf; **Caitlin Reiger and Marieke Wierda,** The Serious Crimes Process in Timor-Leste: In Retrospect, PROSECUTIONS CASE STUDIES SERIES, March 2006, p. 48 https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-TimorLeste-Criminal-Process-2006-English.pdf; **Jürgen Friedrich,** UNMIK in Kosovo: Struggling with Uncertainty A. von Bogdandy and R. Wolfrum, (eds.), Max Planck Yearbook of United Nations Law, 9, 2005, 225-293. Koninklijke Brill N.V. https://www.mpil.de/files/pdf2/mpunyb_friedrich_9_225_293.pdf

[37] United Nations Security Council Resolution 1160 (31 March 1998) http://unscr.com/en/resolutions/doc/1160

Փաստորեն, փաստաթուղթն արձանագրում էր, որ Կոսովոյում տեղի են ունեցել բռնություններ, որոնք հաղթահարելու ուղիները պետք է հանդիսանան հակամարտության լուծման համար կազմակերպված բանակցությունները և քաղաքական կարգավիճակի որոշման հարցի լուծումը:

Կոսովոյի հակամարտության լուծման միջազգային իրավական հաջորդ փաստաթուղթը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1998 թվականի սեպտեմբերի 23-ի 1199 բանաձևն էր, որտեղ, դատապարտելով բռնության ցանկացած գործողություն, մտահոգություն էր հայտնվում ինտենսիվ մարտերի հետևանքով Հարավսլավիայի բանակի կողմից չափից դուրս և անխտիր ուժի կիրառման վերաբերյալ, որոնք հանգեցրել են բազմաթիվ քաղաքացիական զոհերի և ավելի քան 230 հազար մարդկանց տեղահանման: Ավելին, խորապես անհանգստացած լինելով նաև մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի ոտնահարման մասին հաղորդումներով, ընդգծելով Կոսովոյի բոլոր բնակիչների իրավունքների հարգումն ապահովելու անհրաժեշտությունը և հաստատելով, որ Կոսովոյում իրավիճակի վատթարացումն ու Դաշնային Հարավսլավիայի Հանրապետությունը սպառնալիք են տարածաշրջանում խաղաղության և անվտանգության համար, Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության իշխանություններից պահանջվել է անհապաղ քայլեր ձեռնարկել հումանիտար իրավիճակը բարելավելու և մոտալուտ հումանիտար աղետը կանխելու համար:[38]

Կոսովոյի հակամարտության վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հաջորդ բանաձևը 1207-ն էր,[39] իսկ չորրորդը՝ 1239-ը,[40] որտեղ մտահոգություն էր հայտնվում շարունակվող ճգնաժամի հետևանքով Կոսովոյում և Հարավսլավիայի Դաշնային Հանրապե-

[38] United Nations Security Council Resolution 1199 (23 September 1998) http://unscr.com/en/resolutions/doc/1199
[39] United Nations Security Council Resolution 1207 (17 November 1998) http://unscr.com/en/resolutions/doc/1207
[40] United Nations Security Council Resolution 1239 (14 May 1999) http://unscr.com/en/resolutions/doc/1239

տությունում տեղի ունեցած հումանիտար աղետի, փախստականների և տեղահանվածների թվի աճի կապակցությամբ:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1244 բանաձևը Կոսովոյի հակամարտության կարգավորման համար ընդունված հինգ բանաձևերից վերջինն էր, որն առանցքային նշանակություն ունեցավ հակամարտության կարգավորման գործընթացի հետագա զարգացումների տեսակետից: Դրանով վերահաստատվում էին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ Կոսովոյի հակամարտության վերաբերյալ նախորդ բանաձևերում ամրագրված հիմնական դրույթները և պահանջում Հարավսլավիայի դաշնային Հանրապետությունից անհապաղ վերջ դնել Կոսովոյում բռնություններին և բռնաճնշումներին ու Կոսովոյից ամբողջությամբ դուրս բերել բոլոր ռազմական, ոստիկանական և ռազմականացված ուժերը: Այս բանաձևով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին Կոսովոյում ժամանակավոր կառավարում հաստատելու լիազորություն էր վերապահվում, ինչը պետք է նպաստեր Կոսովոյի ժողովրդի՝ Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության կազմում խաղաղ և բնականոն կյանքի ապահովմանը:[41] Հետաքրքիր է, որ թեև այդ բանաձևով Կոսովոյի կարգավիճակի համար նախատեսվում էր լայն ինքնավարություն, սակայն ընդամենը մի քանի տարի հետո Անվտանգության խորհուրդը ընդունեց, որ ինքնորոշման իրավունքն ավելի բարձր կարգավիճակ ունի, քան իր ընդունած բանաձևերը, և որպես կարգավորման հիմք ընդունեց ինքնորոշման իրավունքի կիրառումը՝ Կոսովոյի անկախությունը:

Կոսովոյի հակամարտության վերաբերյալ փաստաթղթեր են ընդունվել նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) կողմից, որոնց թիվն անցնում է մեկ տասնյակից, սակայն խնդրո առարկայի վերաբերյալ հատկապես հատկանշական են դրանցից հինգը: Մասնավորապես՝ ԵԽԽՎ-ի 2004 թվականի ապրիլի 29-ին ընդունված 1375 (2004) բանաձևը դատապարտում էր 2004 թվականին կատարված իրադարձու-

[41] United Nations Security Council Resolution 1244 (10 June 1999) http://unscr.com/en/resolutions/doc/1244

թյունները, որոնք հանգեցրին բազմաթիվ մարդկանց մահվան, ինչպես նաև գույքի, ներառյալ՝ կարևոր մշակութային հուշարձանների վնասվածքների՝ արձանագրելով, որ տեղի է ունեցել ալբանական բնակչության էթնիկ զտում: Այդ բանաձևով որպես Կոսովոյի հակամարտության լուծման միակ իրավական հիմք էր նախատեսվում ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1999 թվականի հունիսի 10-ին ընդունած 1244 բանաձևը: [42]

ԵԽԽՎ-ի 2007 թվականի հունվարի 24-ին ընդունված 1533 (2007) բանաձևն ի սկզբանե նախատեսում էր, որ Կոսովոյի անկախությունն է այն ճանապարհը, որը կարող է ապահովել ինչպես Կոսովոյի, այնպես էլ ամբողջ տարածաշրջանի երկարատև կայունությունն ու խաղաղությունը, սակայն բանաձևի ընդունման գործընթացի շրջանակներում այդ դրույթը խմբագրվեց՝ շարադրվելով որպես կոչ՝ Սերբիայի կողմից ճկուն դիրքորոշում որդեգրելու վերաբերյալ:[43] ***Բանաձևի 17-րդ կետով նախատեսվում էր հետաքննել ենթադրյալ էթնիկական դրդապատճառներով հանցագործությունների բոլոր դեպքերը և պայքարել դրանց կատարողների անպատժելիության դեմ, ինչպես նաև հետաքննել ու քրեական պատասխանատվության ենթարկել ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների բոլոր դեպքերը, որոնք կատարվել են մինչև 1999 թվականը և ապահովել նախկին Հարավսլավիայի համար ստեղծված Միջազգային քրեական տրիբունալի հետ լիարժեք համագործակցություն***:[44]

ԵԽԽՎ-ի 2010 թվականի հունիսի 22-ին ընդունված 1739 (2010) բանաձևով Բելգրադի իշխանություններին կոչ էր արվում ***ապահովել լիարժեք համագործակցություն նախկին Հարավսլավիայի***

---

[42] Situation in Kosovo. PACE Resolution 1375 (2004) 29 April 2004 https://pace.coe.int/en/files/17217/html

[43] **Տիգրան Թորոսյան** Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. Հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան, 2012, էջեր 258-260.

[44] Current situation in Kosovo. PACE Resolution 1533 (2007) 24 January 2007 https://pace.coe.int/en/files/17508/html

միջազգային քրեական տրիբունալի և Կոսովոյում Եվրամիության օրենքի գերակայության առաքելության (EULEX) պատերազմական հանցագործությունների հետաքննության բաժնի հետ, որի հիմնական մանդատը Կոսովոյի ինստիտուտների մշտադիտարկում, ուղղորդում ու դատական համակարգի, մաքսային և ոստիկանության ոլորտներում խորհրդատվություն իրականացումն էր՝ ռազմական հանցագործությունների, լուրջ կամ կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարում:[45]

ԵԽԽՎ-ի մեկ այլ՝ 2013 թվականի հունվարի 22-ին ընդունված 1912 (2013) բանաձևով Վեհաժողովը Կոսովոյում Եվրամիության օրենքի գերակայության առաքելությանը (EULEX) առաջարկում էր ***կենտրոնանալ ռազմական հանցագործությունների հետաքննության վրա և Բելգրադի իշխանություններին կոչ էր անում շարունակել համագործակցությունը Կոսովոյում իրավապահ մարմինների, այդ թվում՝ պատերազմական հանցագործությունների և կազմակերպված հանցագործությունների հետաքննության ստորաբաժանումների, ինչպես նաև Միջազգային քրեական տրիբունալի հետ***:[46]

ԵԽԽՎ-ի 2016 թվականի հունվարի 28-ին ընդունված 2094 (2016) բանաձևով Վեհաժողովը Կոսովոյի իշխանություններին կոչ էր անում գործել ավելի վճռականորեն՝ օրենքի գերակայության ամրապնդման և **ռազմական հանցագործությունների հետաքննությանը հետամուտ լինելու** ուղղությամբ, իսկ Բելգրադի իշխանություններին՝ ուժեղացնել համագործակցությունը տարածաշրջանում գործող անդրազգային հանցավոր ցանցերը վերացնելու, անհայտ կորածներին հայտնաբերելու և ***ռազմական հանցագործությունների հետաքննությանն ու հետապնդմանը նպաստելու*** ուղղությամբ :[47]

---

[45] The situation in Kosovo and the role of the Council of Europe. PACE Resolution 1739 (2010) 22 June 2010 https://pace.coe.int/en/files/17872/html

[46] The situation in Kosovo and the role of the Council of Europe. PACE Resolution 1912 (2013) 22 January 2013 https://pace.coe.int/en/files/19344/html

[47] The situation in Kosovo and the role of the Council of Europe. PACE Resolution 2094 (2016) 28 January 2016 https://pace.coe.int/en/files/22499/html

Դիտարկված բանաձևերը վկայում են, որ թեև դրանցում ուղղակիորեն նշված չէ պատերազմական հանցագործությունների տեղի ունենալու հանգամանքներից բխող որևէ քայլ, այնուամենայնիվ, ընդհանուր համատեքստային վերլուծությունից ակնհայտ է, որ դրանցում արձանագրումը, որ Կոսովոյում տիրող իրավիճակը բնութագրվում էր աճող էթնիկ բռնությամբ, իշխանությունների կողմից մարդու իրավունքների համակարգված խախտումներով, որոնք ուղեկցվում էին պատերազմական և մարդկության դեմ հանցագործությունների կատարմամբ, հիմք դարձավ ինչպես կարգավորման գործընթացի արդյունավետության, այնպես էլ ՄԱԿ-ի կողմից արտաքին միջամտության համար:

Ի տարբերություն Կոսովոյի, Արևելյան Թիմորի հակամարտությունը այլ ուղղվածություն ունեցավ, մասնավորապես՝ 1999 թվականի սեպտեմբերի 17-ին ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի հանձնաժողովը Գլխավոր քարտուղար Քոֆի Անանին կոչ արեց ստեղծել միջազգային հետաքննող հանձնաժողով, որը, համագործակցելով Ինդոնեզիայի մարդու իրավունքների ազգային հանձնաժողովի հետ, պետք է հավաքեր Արևելյան Թիմորում 1999 թվականի հունվարին մարդու իրավունքների հնարավոր ոտնահարումների և միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների վերաբերյալ տեղեկություններ: Ստեղծված քննող միջազգային հանձնաժողովը 2000 թվականին հունվարին զեկույց հանձնեց Միավորված ազգերի կազմակերպությանը՝ խստորեն դատապարտելով Արևելյան Թիմորում իրականացված մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի համատարած, համակարգված և կոպիտ խախտումները, կյանքի, անձնական անվտանգության, ֆիզիկական ամբողջականության և սեփականության իրավունքի համատարած խախտումներն ու չարաշահումները, բռնության և ահաբեկչության վայրագ գործողությունները: Հանձնաժողովը խոր մտահոգությունն էր հայտնում նաև Արևմտյան Թիմոր և հարակից շրջաններ մարդկանց բռնի տեղահանման, տեղահանված թիմորցիների հումանիտար լուրջ իրավիճակի, ինչպես նաև նրանց մեծ մասի դեմ ուղղված բռնության

և ահաբեկման գործողությունների կապակցությամբ՝ ***առաջարկելով տեղահանվածների արագ վերադարձ, աշխարհազորայինների զինաթափում թե Արևելյան, թե Արևմտյան Թիմորում, մարդկության դեմ հանցագործությունների համար հետաքննություն, հետապնդում և փոխհատուցում:***[48]

Արևելյան Թիմորի վերաբերյալ քննող միջազգային հանձնաժողովը, արձանագրելով մարդու հիմնարար և մարդասիրական իրավունքների լուրջ խախտումներ, կոչ արեց ՄԱԿ-ին ***ստեղծել անկախ միջազգային մարմին՝ հետագա հետաքննություններն անցկացնելու, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների կատարման համար պատասխանատու անձանց (ներառյալ հրամանատարական պարտականություններ ունեցողներին) բացահայտելու***, այդ հանցագործություններից տուժածներին փոխհատուցում ապահովելու, ինչպես նաև մարդու իրավունքների լուրջ խախտումների համար մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Այն ՄԱԿ-ին առաջարկեց նաև ստեղծել մարդու իրավունքների միջազգային տրիբունալ, որին կվերապահվի Արևելյան Թիմորում տեղի ունեցած մարդու հիմնարար իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների վերաբերյալ բողոքներ ընդունելու և անկախ քննչական մարմնի կողմից մեղադրվողներին դատապարտելու իրավասություն՝ անկախ անձի ազգությունից կամ խախտումների կատարման վայրից:[49]

---

[48] United Nations General Assembly Security Council A/54/726, S/2000/59 Document «Identical letters dated 31 January 2000 from the secretary-general addressed to the President of the General Assembly, the President of the Security Council and the Chairperson of the Commission on human rights» (31 January 2000) https://www.legal-tools.org/doc/f7e999/pdf/

[49] **James Rae,** War Crimes Accountability: Justice and Reconciliation in Cambodia and East Timor? *Global Change, Peace & Security: formerly Pacifica Review: Peace, Security & Global Change*, 2003, **15,** 2, 157-178. DOI:0.1080/14781150303907

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 2000 թվականի հունվարի 31-ին Արևելյան Թիմորի հարցի վերաբերյալ ընդունված փաստաթղթի[50] հիմքում դրեց Արևելյան Թիմորի վերաբերյալ քննող միջազգային հանձնաժողովի նշված զեկույցում արձանագրված փաստերը՝ ***հավաստելով, որ Արևելյան Թիմորում տեղի են ունեցել պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, ինչպես նաև մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի ոտնահարման գործողություններ, որոնք ուղղված են եղել Անվտանգության խորհրդի որոշման դեմ և հակասել են ՄԱԿ-ի հետ Ինդոնեզիայի՝ Անվտանգության խորհրդի որոշումը կատարելու վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածություններին:***

Իսկ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից Արևելյան Թիմորի հակամարտության վերաբերյալ ընդունված 1272 (1999) բանաձևով ***միջազգային մարդասիրական և մարդու իրավունքների օրենսդրության համակարգված, համատարած և աղաղակող խախտումների հիման վրա Արևելյան Թիմորում տիրող իրավիճակը գնահատելով որպես սպառնալիք միջազգային խաղաղության և անվտանգության դեմ՝ պետք է ստեղծվեր Անցումային վարչակազմ՝ ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչին վերապահելով տարածքի կառավարման լիարժեք՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորություններ:***[51]

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը արձանագրում էր, որ մարդու իրավունքների խախտումների շարունակական երկարաձգումը կարող է սպառնալ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը, ինչն էլ հիմք հանդիսացավ Արևելյան Թիմորում արտաքին միջամտությամբ կառավարման ժամանակավոր մարմիններ ստեղծելու համար: Ավելին, 1999 թվականի

[50] United Nations General Assembly Security Council A/54/726, S/2000/59 Document (31 January 2000) https://www.legal-tools.org/doc/f7e999/pdf/

[51] United Nations Security Council Resolution 1272 (25 October 1999) http://unscr.com/en/resolutions/doc/1272

սեպտեմբերին իրականացված զանգվածային սպանությունները[52] որպես ցեղասպանություն որակելու և Ինդոնեզիայի իշխանություն-ներին պատասխանատվության ենթարկելու ՄԱԿ-ի նախազգու-շացման արդյունքում վերջիններս համաձայնեցին Արևելյան Թիմորում հանրաքվեի անցկացմանը և անկախացման օգտին քվեարկելու դեպքում ժամանակավոր միջազգային կառավարման հաստատմանը:[53]

Արևելյան Թիմորում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1272 բանաձևի հիման վրա 1999 թվականի օգոստոսի 30-ին անցկացվեց հանրաքվե, որի ընթացքում գրանցված 98% մասնակցության արդյունքում 78.5%-ը քվեարկեց անկախացման օգտին, [54] իսկ 2001 թվականի օգոստոսի 30-ին Սահմանադիր ժողովի ընտրություն-ներով հիմք դրվեց Արևելյան Թիմորի անկախացման գործընթացին, ինչի արդյունքում 2002 թվականի մարտի 22-ին ընդունվեց Սահմանադրությունը, իսկ նույն թվականի տարեվերջին Արևելյան Թիմորում արդեն իսկ գործում էին ընտրված խորհրդարանն ու նախագահը: 2002 թվականի մայիսի 20-ին հռչակվեց Արևելյան Թիմորի անկախությունը և այն պաշտոնապես դուրս եկավ չինքնա-կառավարվող տարածքների ցանկից՝ դառնալով ՄԱԿ-ի անդամ:[55]

Այս երկու հակամարտությունների լուծման գործընթացում էական տարրերից մեկը հանդիսացավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, ԵԽԽՎ-ի կողմից պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների կանխման ուղղությամբ քայլեր ձեռնարկելը՝ բռնությունները, սպանությունները, էթնիկ զտումներ իրականացնելը, տեղահանությունները և հումանիտար աղետի պատճառ հանդիսացող այլ գործողությունները կանխելու, ինչպես

---

[52] **Ben Saul,** ... նշվ. աշխ.

[53] **Տիգրան Թորոսյան** Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Երևան, Տիգրան Մեծ, 2008, էջեր 126-127.

[54] **James Rae,** ... նշվ. աշխ., **Derek McDougall,** ... նշվ. աշխ.

[55] **Մարինե Կիրակոսյան** Հակամարտությունների կարգավորման գործընթացում միջազգային կառավարման արդյունավետությունն ու հնարավորությունները, Երևան, *Հեղ. հրատ.*, 2020, 214 էջ, էջ 126

նաև տարածաշրջանային անկայունու-թյունը թուլացնելու նպատակով: Արդյունքում Կոսովոյի և Արևելյան Թիմորի հակամարտություններում գրանցվեց դրական վերջնարդյունք:

Արևելյան Թիմորում ՄԱԿ-ի ընդունման, ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովի 2005 թվականի զեկույցի համաձայն՝ 1974-1999 թվականների հակամարտությունների ընթացքում Արևելյան Թիմորում մահերի նվազագույն թիվը կազմում է 102800 մարդ, որոնցից մոտավորապես 18,600 կամ սպանվել կամ անհետացել է, իսկ մոտավորապես 84,000 մարդ մահացել է սովից կամ հիվանդությունից:[56] Կոսովոյում միջազգային վարչակազմի կառավարում մտցվեց 1981, 1997, 1998 թվականներին մետրոպոլիայի կողմից իրականացվող ճնշումներից և բռնություններից մարդասիրական աղետը կանխելու նպատակով (զոհվածներ՝ 5952, որից ալբանացի՝ 2000, փախստականներ և տեղահանվածներ՝ 1300000) այն դեպքում, երբ Լեռնային Ղարաբաղում 1988, 1990, 1991 թվականների ընթացքում Ադրբեջանի կողմից իրականացված բռնությունների, ճնշումների ու տեղահանությունների արդյունքում գրանցվեց 24000 զոհ, որից հայ՝ 7500 և մեկ միլիոնից ավել տեղահանվածներ ու փախստականներ, որից 400000-ը՝ հայ:[57]

Այսպիսով, Արևելյան Թիմորում և Կոսովոյում իրականացված բռնությունների, պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունների հանրայնացումը և դրա հիման վրա միջազգային կազմակերպությունների համապատասխան բանաձևերի ընդունումը կարևոր հիմք են դարձել հակամարտությունների տարածաշրջաններում ՄԱԿ-ի կողմից հատուկ առաքելությունների իրականացման, հակամարտությունների լուծման գործում քայլեր ձեռնարկելու և տարա-

[56] Conflict-related Deaths in Timor Leste, 1954–1999. The Findings of the CAVR Report Chega! http://www.cavr-timorleste.org/updateFiles/english/CONFLICT-RELATED%20DEATHS.pdf

[57] **Тигран Торосян,** Косово и Нагорный Карабах: сравнительный анализ конфликтов и процессов урегулирования, REGNUM, 21.08.2010. https://regnum.ru/news/polit/1317218.html

ծաշրջանային խաղաղությունն ապահովելու համար ջանքեր գործադրելու ուղղությամբ: Մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, որոնք ուղեկցվել են սպանություններով, բռնություններով, տեղահանություններով, խաղաղ բնակչության գույքը վնասելով կամ ոչնչացնելով, հայտնվել են միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում՝ կանխելու համար տարածաշրջանային հումանիտար աղետը, քանի որ բանակցային կամ քաղաքական լուծման բոլոր հնարավոր մեթոդների կիրառմամբ հնարավոր չի եղել լուծել հակամարտությունը:

Նույնպիսի իրավիճակում է հայտնվել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որը 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո ենթարկվում է բռնությունների, տեղահանությունների, խաթարվել է բնակչության կենսագործունեությունը: ինչը պետք է ուշադրության արժանանա միջազգային համապատասխան կառույցների կողմից: Սակայն ակնհայտ է, որ դրա համար անհրաժեշտ է շատ մեծ ծավալի աշխատանք:

Լեռնային Ղարաբաղում ստեղծված աղետալի իրավիճակի հաղթահարման հնարավորությունները

Ինչպես պարզ դարձավ վերը բերված վերլուծությունից և ինչպես վկայում են մի շարք ուսումնասիրություններ[58], 2020թ. ագրեսիայի

[58] **Tomasz Lech Buczek,** Azerbaijani war crimes against Armenians Karabakh 2020, Based on confirmed sources, *Wiestaw M. Pawtowski*, Lublin 2021, p. 40; Human rights violations during the 44-day war in Artsakh // Fact-finding Report, Yerevan, 2022. https://www.osf.am/wp-content/uploads/2022/06/Fact-Finding-Report_FINAL_web.pdf; 30 Days of War in Karabakh, 27.10.2020 https://www.youtube.com/watch?v=Mim3fa7NUok; Human rights breaches in Myanmar, Mexico and Nagorno-Karabakh, *European Parliament News*, 10 March 2022 https://www.europarl.europa.eu/news/en/press-room/20220304IPR24806/human-rights-breaches-in-myanmar-mexico-and-nagorno-karabakh; Azerbaijan's brutal beheadings and torture of Armenians: A non-exhaustive summary of war crimes, *Panarmenian.net,* 13 April 2021 https://www.panarmenian.net/eng/details/292052/; Willful killing, mutilation, torture, and inhuman treatment of Armenians by Azerbaijani forces https://azeriwarcrimes.org/atrocities/; Violations of the International Humanitarian

ընթացքում և դրանից հետո Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրականացված մի շարք գործողություններ համապատասխանում են միջազգային իրավունքում պատերազմական հանցագործությունների համար սահմանված չափանիշներին և Լեռնային Ղարաբաղի դեպքում էլ, համապատասխան աշխատանքի դեպքում, կարելի է ակնկալել այնպիսի զարգացումներ, ինչպիսիք եղել են Կոսովոյի և Արևելյան Թիմորի դեպքերում: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ Արևելյան Թիմորի և Կոսովոյի հակամարտությունների կարգավորման գործընթացների զարգացումները տեղի են ունեցել միջազգային հարաբերությունների առումով ավելի բարենպաստ պայմաններում: Մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի դեպքում լուրջ բարդություններ է առաջացնում Արևմուտքի և Ռուսաստանի միջև ձևավորված աննախադեպ դիմակայությունը, որը վերաճել է ռուս-ուկրաինական հակամարտության:[59] Ինչպես ցույց տվեցին 2022թ. սեպտեմբերին ադրբեջանական զինված ստորաբաժանումների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներխուժման և դեկտեմբերին Լաչինի միջանցքի ադրբեջանական շրջափակման առնչությամբ հրավիրված ՄԱԿ Անվտանգության խորհրդի նիստերը, նման նախաձեռնությունները՝ առանց համապատասխան մանրամասն նախապատրաստման, դատապարտված են ձախողման, քանի որ նիստի ընթացքում վերածվում են աշխարհաքաղաքական մրցակցության՝ ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամներ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի միջև, հեռանալով նիստի օրակարգային բուն խնդրից ու, ի վերջո, նիստն ավարտվում է ձեռնունայն:

Իհարկե, Լեռնային Ղարաբաղի նկատմամբ սանձազերծված պատերազմը և դրա ընթացքում իրականացված պատերազմական

Law and Customary Law by Azerbaijani Military Forces Documented by Peace Dialogue NGO: Research and Analysis, *PEACE dialogue*, 29 October 2020, https://peacedialogue.am/en/2020/10/29/humanitarian_law_azerbaijan_eng/

[59] **Թորոսյան Տ.,** Նոր աշխարհակարգի ձևավորման ազդեցությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վրա. նոր մարտահրավերներ և նոր հնարավորություններ, *Հայկական քաղաքագիտական հանդես,* 2022, 1, 5-54

և մարդկության դեմ ուղղված մի շարք հանցագործություններ ի կատար են ածվել ՄԱԿ-ի անդամ երկու երկրների՝ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից, ինչը ՄԱԿ-ի կանոնադրության կոպտագույն խախտում է, քանի որ վերջինիս 1-ին հոդվածով ամրագրված ՄԱԿ նպատակներն են միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանումը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարգումը: Ավելին, ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն՝ Անվտանգության խորհուրդը իրավասու է, հետևաբար և պարբավոր է հետաքննել ցանկացած վեճ կամ իրավիճակ, որը կարող է հանգեցնել միջազգային լարվածության կամ վեճի՝ վտանգելով միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը,[60] ինչը ենթադրում է, որ Անվտանգության խորհուրդը պետք է նախ արձանագրի խաղաղության նկատմամբ ցանկացած սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի գործողության առկայության փաստի, և հետո միայն հետամուտ լինի միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանը և վերականգնմանը:[61] Սակայն, միաժամանակ, ակնհայտ է, որ դա ինքնաբերաբար չի կարող արվել, անհրաժեշտ է, որ այն նախաձեռնի ՄԱԿ անդամ որևէ երկիր: Բնական է, որ դա լինի Հայաստանի Հանրապետությունը՝ լրջորեն համագործակցելով Անվտանգության խորհրդի անդամ պետությունների հետ: Քանի որ 2018թ. հետո իշխանությունների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաբերյալ բխում է բոլորովին այլ մոտեցումներից[62], ապա ակնհայտ է, որ իրական չէ նրանցից նման ակնկալիք ունենալը:

---

[60] UN Charter, Chapter 6, Article 34, https://www.un.org/en/about-us/un-charter/full-text

[61] **Mark Baksin,** Between exit and engagement: on the dicision of authority in transitional administrations, *Global Governance,* 10, 1, 2004, 119-137.

[62] Թորոսյան Տ., 2020թ. պատերազմ. նախադրյալները, հետևանքները և աղետի հաղթահարման հնարավորությունները, https://luys.am/img/artpic/small/17421d60c00deb99e93e2020Թ.-ՊԱՏԵՐԱԶՄ.-ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ-ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ-ԵՎ-ԱՂԵՏԻ-ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ-ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.pdf.

Հետևաբար, նախաձեռնողը պետք է լինի Լեռնային Ղարաբաղի իշխանությունը կամ, նրա աշխատանքի արդյունքում՝ Անվտանգության խորհրդի որևէ անդամ պետություն: Ընդ որում, նման նախաձեռնության գլխավոր նպատակներից մեկը պետք է լինի Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի վերականգնումը: Եթե անգամ դա արվի այլ ձևաչափով, քան Մինսկի խումբն է, ապա գործընթացը պետք է շարունակվի այն կետից, որտեղ 13 տարվա արդյունավետ աշխատանքներից հետո ընդհատվել է: Բանակցային սեղանին պետք է վերադարձվի 1975 թվականին ընդունված Հելսինկյան եզրափակիչ ակտի[63] երեք սկզբունքների՝ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառում, պետությունների տարածքային ամբողջականության հարգում և ժողովուրդների իրավահավասարություն ու ինքնորոշման իրավունքի վրա կառուցված կարգավորման փաստաթուղթը, որը կարող է ապահովել հակամարտության արդար և իրավական լուծում: Ընդ որում, լուծումը պետք է իրականացվի անհապաղ, քանի որ Ադրբեջանը ապացուցել է՝ կարգավորման գործընթացի յուրաքանչյուր ձգձգում օգտագործում է պատերազմական հանցագործությունների կիրառմամբ խնդրի լուծում պարտադրելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵԱՀԿ-ն 2021 թվականի ապրիլից հետո որևէ արձագանք չի ունեցել Լեռնային Ղարաբաղում զարգացող իրադարձություններին, մնում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, որն իրավասու է միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնացող վեճի կամ համանման իրավիճակի ցանկացած փուլում հանձնարարել վեճի կարգավորման համապատասխան ընթացակարգ (եղանակ) կամ իրավիճակի վատթարացումը կանխելու նպատակով շահագրգիռ կողմերից պահանջել կատարելու այն ժամանակավոր միջոցառումները, որոնք անհրաժեշտ կամ ցանկալի կհամարի[64]: Պատերազմական հանցագոր-

[63] Final act of the Conference on security and co-operation in europe, Helsinki 1975, https://www.osce.org/files/f/documents/5/c/39501.pdf

[64] UN Charter, Chapter 6, Article 40 https://www.un.org/en/about-us/un-charter/full-text

ծությունների իրականացման փաստի ամրագրումից հետո Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման համար ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն իր բանաձևով կարող է կարգավորել նաև վերջինիս միջանկյալ կարգավիճակի հարցը՝ ՄԱԿ-ի կողմից արտաքին միջամտություն իրականացնելու միջոցով:

Եզրակացություն

Միջազգային իրավունքում ամրագրված պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, ինքնորոշման իրավունքի իրացման վրա դրանց ունեցած ազդեցության, ինչպես նաև 2020 թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ադրբեջանաթուրքական ագրեսիայի ընթացքում իրականացված գործողությունների վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ՝

1. Լեռնային Ղարաբաղի դեմ ադրբեջանաթուրքական ագրեսիայի ընթացքում կիրառված մի շարք գործողություններ ու միջոցներ լիովին համապատասխանում են միջազգային իրավունքի փաստաթղթերով սահմանված պատերազմական ու մարդկության դեմ ուղղված հանցագործությունների չափանիշներին:

2. Կոսովոյի և Արևելյան Թիմորի հակամարտություններում թույլ տրված պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտումը, հանրայնացումը և արձանագրումը համապատասխան լիազորություններ ունեցող միջազգային կազմակերպությունների ընդունած բանաձևերում էական ազդեցություն են ունեցել այդ հակամարտությունների կարգավորման գործընթացների ճշգրտման և հանգուցալուծման տանելու տեսակետից: Դրա հետևանքով է երկու դեպքում էլ մտցվել արտաքին կառավարում, ներգրավվել են միջազգային կարգավիճակ ունեցող խաղաղապահ ուժեր, ինչպես նաև կազմակերպվել է վերջնական կարգավիճակի որոշում, ինչը թույլ է տվել դադարեցնել շարունակական բռնությունները, ինքնորոշվող կողմին օժտել պաշտպանության անհրաժեշտ մեխանիզմներով:

3. Լեռնային Ղարաբաղի հակամարտության դեպքում 2020թ. ադրբեջանաթուրքական ագրեսիայից հետո խափանվել են կարգա-

վորման գործընթացի նախկին մեխանիզմները և անհրաժեշտ է ձևավորել նորերը՝ հիմք ընդունելով այդ ագրեսիայի ընթացքում իրականացված պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները: Այդ գործընթացի իրականացման կարևոր պայման է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության /ցանկալի է՝ նաև Հայաստանի Հանրապետության/ իշխանությունների ամեն-օրյա բազմագործոն աշխատանքի դեպքում:

4 Ադրբեջանի շարունակական ագրեսիվ գործողությունների արդյունքում Լեռնային Ղարաբաղում ստեղծված աղետալի իրավի-ճակի հանգուցալուծման և և դրա հետագա խորացումը կանխելու նպատակով անհրաժեշտ է ապահովել աշխատանք երկու ուղղություններով՝ միջազգային կարգավիճակ ունեցող հետաքննիչ մարմնի ձևավորում ՄԱԿ-ի հովանու ներքո, որը կնախապատրաստի մասնագիտական գնահատական Լեռնային Ղարաբաղի նկատմամբ կատարված պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցա-գործությունների և հետագայում դրանց կանխմանն ուղղված քայլերի վերաբերյալ, ինչպես նաև վերագործարկել Մինսկի խմբի գործունեությունը կամ, դրա անհնարինության դեպքում, կրկին ձևավորել նման մարմին՝ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշման հարցով:

The Impact of War Crimes on the Process of Conflict Settlement: The Case of Nagorno-Karabakh

MARIA PETROSYAN
Brusov State University

During the settlement of ethno-political conflicts, when the metropolitan state is unable to prevent the development of this process towards the recognition and application of the right to self-determination by legal or political methods, it often resorts to military aggression, during which it may even commit war crimes or crimes against humanity in order to achieve its goal. Since international law defines them as serious crimes, the party seeking to self-determination can use them as a valid argument to demand the immediate application of that law. The article discusses the effectiveness of using such an approach in other cases of regulating self-determination conflicts. It also considers the compliance of the measures applied to Nagorno-Karabakh during the Azerbaijani-Turkish aggression in 2020 with the standards set for war crimes and crimes against humanity in international law, as well as the possibilities of ensuring significant developments in the process of Nagorno-Karabakh's status determination based on them.